ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԱՐԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱՁԵՎԵՐՈՒՄ. ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

ՀՐԱՅՐ ՓԱՇԱՅԱՆ

Բանալի բառեր - Ղարաբաղյան հակամարտություն, Եվրոպական խորհրդարան, հիմնախնդրի կերպար, փոխակերպում, խորհրդարանական դիվանագիտություն, ժողովրդական դիվանագիտություն, միջազգային հանրություն:

Ղարաբաղյան հակամարտության առանձնահատկություններից մեկն էլ, ինչպես հայտնի է, կապված է կարգավորման գործընթացում միջազգային կառույցների առանձնակի դերակատարության հետ, որոնք ունեցել և կարող են ունենալ ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն[1]: Դրանց թվին են պատկանում մասնավորապես եվրոպական կառույցները, որոնք Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում ներգրավված են թե՛ բազմակողմ, թե՛ երկկողմ ձևաչափերով նախաձեռնություններում: Բազմակողմ հիմնական դերակատարներ են Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ), Եվրոպական Միությունը (ԵՄ), Եվրոպայի Խորհրդի տարբեր կառույցները: Պաշտոնական մակարդակում եվրոպական կառույցների ներգրավումը հիմնականում կապված է Լեռնային Ղարաբաղի իշխանության ներկայացուցիչների հետ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների աշխատանքի, հակամարտության և դրա կարգավորման շուրջ ԵԽ ընդունած փաստաթղթերի հետ[2]:

Եվրոպական միության առանցքային կառույցներից մեկը՝ Եվրոպական խորհրդարանը[3], Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ բա-

---

* Հետազոտությունն իրականացվել է ԼՂՀ ԿԳՆ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության՝ № SCS 17/003 գիտական թեմայի շրջանակներում:

[1] **Փաշայան Հ., Բալայան Լ.** Ռոբերտ Ուոլթերի հակահայկական զեկույցը. հայացք Արցախից www.noravank.am

[2] Եվրոպական կառույցների դերը Լեռնային Ղարաբաղի զարգացման գործընթացում: Համառոտագիր մշակված 2009թ. նոյեմբերի 25-ին կայացած՝ «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը և Եվրոպան» վերնագրով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա, file:///C:/Users/Intel_Education/Downloads/70-NK-Arm%20(1).pdf

[3] Եվրոպական խորհրդարան. Եվրամիության օրենսդիր մարմին, որն ուղղակի ընտրվում է ԵՄ անդամ-պետությունների քաղաքացիների կողմից: Եվրոպական խորհուրդի հետ

նաձևեր է ընդունել Արցախյան շարժման նորօրյա փուլի մեկնարկին զուգընթաց՝ սկսած 1987 թվականից: Հետագայում ևս կառույցի կողմից պարբերաբար ընդունվել են նման բանաձևեր, որոնցում գլխավորապես Հարավային Կովկասին վերաբերող հարցերի շրջանակներում, ներկայացրել է Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ սեփական դիրքորոշումը՝ համապատասխան շեշտադրումներով:

Քանի որ «Քաղաքական փաստարկները Ղարաբաղյան հիմնախնդրի փաստաթղթերում և կարգավորման գործընթացում»[1], աշխատությունում վերլուծված են Եվրախորհրդարանի կողմից մինչև 1993թ. ընդունված առանցքային փաստաթղթերը, ապա սույն հոդվածում հետազոտության գլխավոր թիրախ է ընտրված ժամանակագրական առումով հաջորդ առանցքային՝ 1999թ. ընդունված բանաձևը, որը կարևոր նշանակություն ունի նաև հայկական զույգ պետությունների արտաքին քաղաքականության գերակա ուղղություններից մեկի՝ Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման տեսանկյունից:

Տարբեր գործոնների փոխազդեցությանը ենթարկվելով, բանաձևերում առկա ձևակերպումները ի ցույց են դնում հիմնախնդրի վերաբերյալ Եվրոպական խորհրդարանի ընկալումները և դրանց փոխակերպումները: Մյուս կողմից՝ դրանք զգալի ազդեցություն կարող են ունենալ ԵՄ և անդամ երկրների հիմնախնդրի վերաբերյալ ընկալումների ձևավորման և գործնական քաղաքականության որդեգրման տեսանկյունից: Հետևաբար, անհրաժեշտ է պարզաբանել, թե ի՞նչ գործոնների ազդեցությամբ են ձևավորվել և հետագայում բացասական կամ դրական փոխակերպումների ենթարկվել կառույցի կողմից ընդունված բանաձևերը:

Տարածաշրջանում ԵՄ դերի հետագա ընդլայնման պատրաստակամությունը (ոչ միայն մարդու իրավունքների և քաղաքացիական հասարակության ձևավորման ոլորտներում) այդ թվում՝ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում, աճի միտում ունի և այս ուղղությամբ զգալի ներուժ կա իրացնելու, հաշվի առնելով Եվրախորհրդարանի հետ ձևավորված պատմական հարաբերությունները, արդի իրողությունները, խորհրդարանական և ժողովրդական դիվանագիտության ընձեռած հնարավորությունները: Վերոնշյալն արդիական է դարձնում

խորհրդարանը կազմավորում է ԵՄ իշխանության երկպալատ օրենսդրական ճյուղը և համարվում է աշխարհի ամենաազդեցիկ օրենսդրական մարմիններից մեկը: Խորհրդարանի հիմնական գործառույթներից մեկը Եվրամիության բյուջեի հաստատումն է: Խորհրդարանն օժտված է նաև Եվրոպական Հանձնաժողովին անվստահություն հայտնելու իրավասությամբ ու այլ գործառույթներով: https://hy.wikipedia.org/wiki և http://n-europe.eu/glossary /term/603

[1] Տես՝ **Փաշայան Հ.,** «Քաղաքական փաստարկները Ղարաբաղյան հիմնախնդրի փաստաթղթերում և կարգավորման գործընթացում», Ստեփանակերտ, 2016, էջ 256:

«Ղարաբաղյան հակամարտության կերպարի ընկալումները Եվրոպական խորհրդարանի բանաձևերում. միտումներն ու փոխակերպման հնարավորությունները» վերտառությամբ հետազոտությունը՝ ընդունված փաստաթղթերի վերլուծության համատեքստում:

Կառույցի կողմից ընդունված փաստաթղթերում Ղարաբաղյան հակամարտության կերպարի ընկալման ժամանակագրական փոխակերպումները ամբողջական ներկայացնելու նպատակով, նախ մի փոքր պատմական ակնարկ կատարենք: Այսպես, դեռևս Ղարաբաղյան շարժման վերսկսման և Ադրբեջանի կողմից արցախահայությանը պարտադրած պատերազմի ընթացքում, Եվրոպական Խորհրդարանն ընդունել է հիմնախնդրի իրական էությունը բնորոշող մի շարք բանաձևեր: Օրինակ, 1988 թվականի հուլիսի 7-ին ընդունված բանաձևում մասնավորապես նշված է.

> «... նկատի ունենալով Հայաստանի հետ Լեռնային Ղարաբաղի միավորվելու պահանջը և Լեռնային Ղարաբաղի պատմական կարգավիճակը որպես Հայաստանի մաս, որը 1923թ. Կամայականորեն տրվել է Ադրբեջանին, ինչպես նաև 1988 թվականի փետրվարին Սումգայիթում սանձազերծած կոտորածները..., դատապարտել հայերի նկատմամբ իրականացվող բռնությունները և աջակցել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությանը Ղարաբաղը Հայաստանի հետ միավորելու պահանջին, ապահովել Ադրբեջանի հայ բնակչության անվտանգությունը, պատժել հայկական ջարդերն իրականացնողներին...»[1]:

1989-1991 թվականներին ընդունած բանաձևերում մտահոգություններ են արտահայտված «Ղարաբաղ» կոմիտեի անդամների անօրինական ձերբակալության, Բաքվի հայկական ջարդերի, ՀՀ և ԼՂ շրջափակման, «Օղակ» գործողության ժամանակ խորհրդային բանակի և Ադրբեջանի «ՕՄՕՆ»-ականների կատարած բռնությունների և անօրինականությունների կապակցությամբ:

1991-1994 թվականներին ընդունված բանաձևերում նկատելի են հակամարտող կողմերի միջև որոշակի հաշվեկշիռ ապահովելու դրսևորումներ: Այդուհանդերձ, 1993թ. հունվարի 21-ին ընդունված բանաձևում[2] Եվրախորհրդարանն արձանագրելով *«Ադրբեջանից բռնատեղահանված 300 հազար հայերի ողբերգական դրությունը», «Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի իշխանությունների միջև բանակցությունների համար պայմաններ ստեղծելու»* անհրաժեշտությունը և տեղի ունեցած մյուս փաստե-

[1] (Г) Документы по совместной резолюции B2-538 и 587 88, Official Journal of Europian Communities, № C 94/11

[2] Տես՝ Official Journal of Europian Communities, No C 42/165. (f) REZOLUTION B3-0049/93

րը, որպես միջազգային խաղաղության պահպանման համար պատասխանատու կառույց ԱՀ-ից պահանջել է դադարեցնել միջազգային իրավունքի ակնհայտ խախտումներն ու շրջափակումը, որոնք ուղղված են ՀՀ-ին պատերազմի մեջ ներքաշելուն[1]: Այսինքն՝ Եվրոպական խորհրդարանը նշված ժամանակաշրջանում հիմնախնդիրն ընկալել է իր բուն էությանը համապատասխան, որով էլ պայմանավորված էին նմանաբովանդակ բանաձևերի ընդունումը: Վերջինս իր հերթին, կարծում ենք, ուղղակիորեն կապված էր ողջ հայության կողմից հակամարտության վերաբերյալ ակտիվ, համապարփակ և շարունակական տեղեկատվության ապահովմամբ:

Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման գործընթացի տեսանկյունից բավականին առանձնահատուկ կարելի է համարել Եվրոպական Խորհրդարանի կողմից 1999 թվականի մարտի 11-ին ընդունած բանաձևը, որը հարկ է մանրամասն վերլուծել՝ դրանցում առկա քաղաքական փաստարկների վերհանման և ըստ անհրաժեշտության օգտագործելու նպատակով: Մանավանդ, եթե 1980-ականների վերջին և 1990-ականների սկզբին ընդունված բանաձևերի շեշտադրումները կարելի է պայմանավորել, այսպես ասած, Արևմուտք-ԽՍՀՄ հակադրությամբ, կամ վերջինիս փլուզումը վերջնականապես իրագործելու գաղափարով, ապա նշված բանաձևը լիովին զերծ է այդպիսի ազդեցություններից: Լեռնային Ղարաբաղին վերաբերող վերոնշյալ՝ *«Կովկասում խաղաղության գործընթացին աջակցելու մասին բանաձևը»*[2] նախևառաջ կարևորվում է Ղարաբաղյան հակամարտության նկատմամբ կառույցի դրսևորած քաղաքական դիրքորոշման տեսանկյունից:

Այսպես, բանաձևի ա. կետում ուղղակիորեն արձանագրված է, որ *1991թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը իր անկախությունը հռչակել է հետևելով ԽՍՀՄ փլուզումից հետո նախկին խորհրդային սոցիալիստական հանրապետությունների համանման հռչակագրերին (փաստաթղթի հայերեն՝ ոչ պաշտոնական թարգմանությունը տես հավելվածում):* Այսինքն՝ դրանով ճանաչվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հռչակման միջազգային-իրավական այնպիսի հիմնավորվածություն, որը հավասարազոր է մնացած միութենական հանրապետությունների համանման հռչակագրերին[3]: Ինչպես հայտ-

[1] Փաստաթղթի վերլուծությունը տես՝ **Փաշայան Հ.,** Քաղաքական փաստարկները Ղարաբաղյան հիմնախնդրի փաստաթղթերում և կարգավորման գործընթացում, Ստեփանակերտ, 2016, էջ 127-129:

[2] Official Journal of the European Communities, C 175, 21.6.1999 p. 251.

[3] **Заргарян Р.** Резолюции Европарламента - послание в адрес Азербайджана, https://fraza.ua/stenograms/113698-ruben-zargaryan-rezolyucii-evroparlamenta--poslanie-v-adres-azerbaydzhana

նի է, ԼՂՀ անկախության մասին Հռչակագիրը[1] ընդունվել է երկու օր անց՝ այն բանից հետո, երբ Բաքուն 1991թ. օգոստոսի 30-ին հրաժարվելով ԱդրԽՍՀ իրավահաջորդությունից ընդունել էր «1918-1920 թթ. պետական անկախության վերականգնման մասին» հռչակագիրը[2]: Փաստորեն, Արևմուտքի հեղինակավոր քաղաքական կառույցներից մեկը Արցախի Հանրապետության հռչակումը պայմանավորել է ԽՍՀՄ փլուզման արդյունքում տեղի ունեցած անկախացման գործընթացներով և այն որևէ ձևով չի կապել Ադրբեջանից ինքնորոշվելու կամ նրա տարածքային ամբողջականության հետ, ինչը լիովին համապատասխանում է նաև հիմնախնդրի իրավական հիմքերին[3]: Կարծիք կա նաև, որ այդ բանաձևի ընդունումը պաշտպանել ու ողջունել էին ԵԱՀԿ ՄԽ համանախագահներ հանդիսացող Ռուսաստանի և Ֆրանսիայի ներկայացուցիչները[4], ինչն էլ ավելի է արժևորում նրա կարևորությունը հայկական դիվանագիտության առջև այս ուղղությամբ գործադրվելիք ջանքերի համատեքստում:

Բանաձևի բ. կետում նշված է, որ *պատերազմը լուրջ հումանիտար խնդիրների՝ մասնավորապես Հայաստանից, Լեռնային Ղարաբաղից և Ադրբեջանից ավելի քան մեկ միլիոն մարդու տեղափոխման պատճառ է դարձել:* Եթե համեմատենք Եվրոպական Խորհրդարանի նախորդիվ ընդունված բանաձևերի հետ, ակնհայտ է դառնում, որ պատերազմի ու հումանիտար խնդիրների ստեղծման մեղադրանքն ուղղված է ադրբեջանական կողմին: Այսպես, դեռևս 1988թ. հուլիսի 7-ի բանաձևում Եվրոպական խորհրդարանը ադրբեջանահայերի նկատմամբ իրականացվող բռնությունները կապելով Լեռնային Ղարաբաղում ծավալված իրադարձությունների հետ, Ադրբեջանին դատապարտում է Սումգայիթում և Բաքվում հայերի կոտորածների, զանգվածային սպանությունների ու բռնությունների համար, ինչի հետևանքով նրանց համար վտանգավոր է ապրել Ադրբեջանում[5]: Սա վկայությունն է այն փաստի, որ հենց Ադրբեջանն է հանդիսանում զինված առճակատման նախահարձակ կողմը՝ փորձելով հայերին ոչնչացնելու ճանապարհով լուծել խնդիրը: Արդեն 1993թ. հունվարի 21-ին ընդունած բանաձևում առանց տարաբնույթ մեկնաբանություններ առա-

---

[1] Հռչակագիրը տես՝ http://www.president.nkr.am/am/nkr/nkr1 կամ Статус Нагорного Карабаха в политико-правовых документах. Ереван, 1995г., с. 69-70.

[2] Газ. «Бакинский рабочий», 3 сентября 1991г.

[3] «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին» Հռչակագրի վերլուծությունը տես՝ **Փաշայան Հ.,** նշվ. աշխ., էջ 94-98:

[4] **Շաքարյան Ս.,** Ռուսաստանի Դաշնության քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորման գործում, Հայաստան 2020. զարգացման և անվտանգության ռազմավարություն, Եր., 2002, էջ 478:

[5] (Г) Документы по совместной резолюции B2-538 и 587 88, Official Journal of Europian Communities, № C 94/11

ջացնող ձևակերպումների նշված էր, որ հենց ադրբեջանական կողմն է հանդիսանում 300 հազար հայերին Ադրբեջանից բռնությամբ վտարողը: Իսկ բանաձևի «դ» կետում նշելով Հայաստանի շրջափակման մասին, Եվրախորհրդարանը քաղաքական գնահատական էր տվել ԱՀ-ի վարած և այժմ էլ իրականացվող ապակառուցողական քաղաքականությանն ու իրական մտադրությանը. **«...Ադրբեջանի կողմից լիակատար շրջափակումը և դրա հետևանքով առաջացած տնտեսական ճգնաժամը նպատակ ունեն Հայաստանին ներքաշել զինված հակամարտության մեջ»**[1]**:** Այսինքն՝ հստակորեն արձանագրվել է այն փաստը, որ հակամարտությունը Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի միջև է, այլ ոչ թե ՀՀ-ի ու ԱՀ-ի, բայց ադրբեջանական կողմը նպատակաուղղված քաղաքականություն է իրականացնում ՀՀ-ին հակամարտության մեջ ներքաշելու համար: Եվրախորհրդարանն արձանագրելով տեղի ունեցած փաստերը, որպես միջազգային խաղաղության պահպանման համար պատասխանատու կառույց ԱՀ-ից պահանջել է դադարեցնել միջազգային իրավունքի ակնհայտ խախտումները և ՀՀ-ին պատերազմի մեջ ներքաշելուն ուղղված շրջափակումը: Բաքվի այդ քաղաքականությունը չի փոխվել և այժմ էլ ամեն ինչ անում է ՀՀ-ին հակամարտության մեջ ներքաշելու՝ նրան միջազգային հանրությանն ագրեսորի կերպարով ներկայացնելու և իր կողմից հրահրվող սադրանքներն ու ռազմական գործողությունները հիմնավորելու համար[2]:

Բանաձևի *գ. և դ. կետերում խոսվում է 1994թ. կրակի դադարեցման ռեժիմի պահպանման և Հայաստանի ու Ադրբեջանի Եվրոպական խորհուրդ մտնելու ցանկության մասին*: Արձանագրենք, որ եթե Եվրոպական խորհուրդ մտնելու այս ցանկություններն արդեն իրականություն են դարձել, ապա 1994թ. կրակի դադարեցման ռեժիմը շարունակաբար խախտվում է Ադրբեջանի կողմից և նրա պահպանումը շարունակում է մնալ խաղաղ կարգավորմանը հասնելու նախապայմաններից մեկը: Ըստ ե. կետի՝ *Ժողովրդավարության ամրապնդումը և մարդու իրավունքների հարգումը նախապայման են հանդիսանում Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման համար:* Այս կետում առկա է որոշակի հակասականություն՝ հիմնախնդրի կարգավորման իրավական շեշտադրումից կարծես թե անցում է կատարվում դեպի քաղաքականը, չնայած պետք է ասել, որ ժողովրդավարության ամրապնդումն ու մարդու իրավունքների հարգումը իրավական հասկացությունների թվին են պատկանում: Օրինակ, համեմատության համար, ինչպես ցույց են տվել Կոսո-

[1] Official Journal of Europian Communities, No C 42/165. (f) REZOLUTION B3-0049/93

[2] **Гасанов А.** Политика национального развития и безопасности Азербайджанской Республики. Баку, 2014, глава V.

վոյի շուրջ տեղի ունեցած իրադարձությունները, *Ժողովրդավարության ամրապնդումը, մարդու իրավունքների հարգումը և այլ կարևոր սկզբունքներ գերտերություններն* ուղղակիորեն չեն պայմանավորել վերջինիս անկախության ճանաչման հետ, չնայած ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը նախագահության SC/7951 հայտարարությամբ աջակցություն էր հայտնել 2003թ. հրապարակված «Չափորոշիչներ Կոսովոյի համար» փաստաթղթին, որպես հակամարտության կարգավորման նախապայման ընդունելով «նախ չափորոշիչներ, ապա կարգավիճակ» սկզբունքը[1]: Այնուամենայնիվ, դա չի խանգարել Արևմտյան երկրներին քաղաքական նպատակահարմարությունից ելնելով շրջանցել «չափորոշիչները» և 2008-ին ճանաչել ժողովրդավարության ու մարդու իրավունքների ոլորտում լուրջ խնդիրներ ունեցող երկրի անկախությունը:

Մեր դեպքում, ի տարբերություն Կոսովոյի, անհրաժեշտ է հաշվի առնել միջազգային հանրության, այդ թվում՝ Արևմուտքի Լեռնային Ղարաբաղին այս հարցում չաջակցելու դիրքորոշումը, ինչը հակամարտության առկայության պայմաններում լուրջ խոչընդոտ է հանդիսանում Մարդու իրավունքների հարգման և ժողովրդավարության ամրապնդման համար: Մինչդեռ՝ 1988թ. Եվրախորհրդարանի բանաձևը հիմնախնդրի կարգավորման և Լեռնային Ղարաբաղի Հայաստանի հետ միավորման նախապայման է դիտել ոչ թե ժողովրդավարության ամրապնդումն ու մարդու իրավունքների հարգումը, այլ առավել իրավաչափ ու արդարացի համարվող պատմական գործոնների և 1920-ականներին իրագործված ոչ իրավական որոշումների հաշվառումը: Կարծում ենք, այստեղ դերակատարում են ունեցել կազավորման գործընթացում տեղ գտած զարգացումները, որն էլ ըստ երևույթին արձանագրվել է ը. կետում, որում նշված է, որ *Միայն տարածաշրջանի բոլոր խնդիրները և վերջին ժամանակաշրջանի ընդհանուր քաղաքական զարգացումները հաշվի առնող մոտեցումը կարող է հանգեցնել երկարատև խաղաղության:* Այսինքն՝ ի տարբերություն նախկին բանաձևերի այժմ արդեն խաղաղության հասնելու նախապայմաններից մեկն էլ դիտվել է որևէ հստակություն չունեցող, արագորեն փոփոխվող *տարածաշրջանի բոլոր խնդիրները և վերջին ժամանակաշրջանի ընդհանուր քաղաքական զարգացումները հաշվի առնող մոտեցումը:*

Հարկ է ընդգծել նաև, որ ե. կետում մատնանշված. *Ժողովրդավարության ամրապնդումը և մարդու իրավունքների հարգումը նախապայման են հանդիսանում Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման համար* դրույթն իրագործելու համար Եվրոպական կա-

[1] https://www.un.org/press/en/2003/sc7951.doc.htm

ռույցները տարիներ շարունակ գործնական քայլերի չեն դիմել: Ընդհակառակը՝ 1994 հրադադարի ստորագրումից ի վեր, Եվրոպական միությունը խուսափում էր որևէ կապ հաստատել Լեռնային Ղարաբաղի հետ և ոչ մի աջակցություն չէր ցուցաբերում Արցախահայությանը, այն դեպքում, երբ աջակցություն էր տրամադրում բոլոր այն տարածքներին, որոնք ունեն դրա կարիքը՝ անկախ այդ տարածքների քաղաքական կարգավիճակից[1]: Ավելին՝ հակասելով 1992թ. միջազգային հանրության անունից Ղարաբաղյան հակամարտության կարգավորմամբ զբաղվելու համար լիազորված մարմնի՝ Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդի մարտի 24-ի նիստում ընդունված փաստաթղթի կարևորագույն կետերից մեկին, որում Լեռնային Ղարաբաղի ընտրված ներկայացուցիչները ներկայացված են որպես շահագրգիռ կողմ[2], եվրոպական կառույցները Արցախում կայացած յուրաքանչյուր ընտրություններից հետո հայտարարում են, որ չեն ընդունում դրանց արդյունքները, հետևաբար նաև արդյունքում ձևավորված ժողովրդի ներկայացուցիչներին: Մինչդեռ ակնհայտ է, որ ընտրված ներկայացուցիչներ հնարավոր է ունանալ միայն ընտրությունների շնորհիվ:

Բանաձևի զ. կետում խոսվում է 1998թ. Ադրբեջանում և Հայաստանում կեղծարարություններով ու խախտումներով կայացած ընտրությունների մասին, իսկ է. կետով արձանագրվում, *որ մինչև ներկա ժամանակներս Լեռնային Ղարաբաղի հակամարտության քաղաքական կարգավորման բանակցությունները դրական արդյունքների չեն բերել:*

Հատկանշական է բանաձևի թ. կետը, որում նշված է, որ *Ռուսաստանը, ԱՄՆ և Ֆրանսիան ներակայացնող Մինսկի խմբի երեք համանախագահները, որոնց ԵԱՀԿ-ն հանձնարարել է մշակել ծրագիր երկարատև խաղաղության հասնելու համար, ներկայացրել են արդարացի հիմք՝ խնդրի խաղաղ կարգավորման բանակցությունների համար:* Այս կետում ևս առկա է որոշակի հակասություն ոչ միայն նախորդիվ ընդունված բանաձևերի բովանդակության, այլև տվյալ բանաձևի ա. կետի համեմատ, որում ԼՂԻՄ անկախության հռչակումը հավասարեցված է նախկին խորհրդային սոցիալիստական հանրապետությունների անկախության

[1] Արցախը Եվրոպական հարևանությամբ գտնվող միակ չճանաչված տարածքը չէ. Հարավային Օսեթիան, Աբխազիան, Մերձդնեստրը և Հյուսիսային Կիպրոսը այլոց հետ մեկտեղ գտնվում են նույն կարգավիճակում և բոլորն էլ ստանում են էական օգնություն Եվրամիությունից: Ինչ վերաբերվում է Կոսովոյին, որը նույնպես նախկինում ճանաչված չի եղել, խոշոր չափերի ֆինանսական օգնություն է տրամադրվել, որի մեծ մասը ստացել է մինչև միջազգային ճանաչման գործընթացի սկսվելը: Տես՝ http://www.agbu.am/am/archive/2017-12-21-07-25-48/2017-12-21-08-45-23/3302-nagorno-karabakh-the-eu-conference-european-parliament

[2] Первая дополнительная встреча совета СБСЕ В Хельсинки, Официальный сайт ОБСЕ: http://www.osce.org/documents/mcs./1992/03/4150_ru.pdf.

հռչակման իրավական հիմքերին: Իսկ 1988թ. հուլիսի 7-ին ընդունված բանաձևով, ինչպես նշվեց, *նկատի ունենալով Հայաստանի հետ Լեռնային Ղարաբաղի միավորվելու պահանջը և Լեռնային Ղարաբաղի՝ որպես Հայաստանի մաս հանդիսանալու պատմական կարգավիճակը, որը 1923թ. կամայականորեն տրվել է Ադրբեջանին, Եվրախորհրդարանը պետք է աջակցեր Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությանը Ղարաբաղը Հայաստանի հետ միավորելու պահանջին:* Սակայն, շեշտադրումը, որ համանախագահները *ներկայացրել են արդարացի հիմք՝ խնդրի խաղաղ կարգավորման բանակցությունների համար,* չի համապատասխանում ոչ միայն հիմնախնդրի էությանը, այլև հենց Եվրախորհրդարանի կողմից ընդունված բանաձևերի բովանդակությանը: Բանն այն է, որ համանախագահների կողմից 1997-1998թթ. ներկայացրած (այսինքն մինչև 1999թ.) «Փաթեթային[1]», «Փուլային»[2] և «Ընդհանուր պետություն»[3] անվանումը ստացած հակամարտության կարգավորման տարբերակները չէին պարունակում Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միավորելու պահանջը, որի իրականացմանը, ինչպես արդեն նշվեց, պարտավորվել էր աջակցել Եվրախորհրդարանը[4]:

Սակայն այստեղ հարկ է ընդգծել այն կարևոր հանգամանքը, որ Եվրոպական խորհրդարանի բանաձևը սկսվում է վկայակոչելով Կովկասի վերաբերյալ իր նախորդ հռչակագրերը հաշվի առնելու անհրաժեշտությունը, ինչը փաստորեն ամբողջության մեջ է դիտարկում 1987-1999 թթ. ընդունած բանաձևերը և չի հրաժարվում նրանցում ամրագրված դրույթներից:

Այս ամենից ելնելով, Եվրոպական խորհրդարանը.

«1. խրախուսում է Մինսկի խմբի առաջարկած խաղաղության ծրագիրը,

2. այն կարծիքին է, որ այդ առաջարկությունները քննարկման հիմք են, որը կարող է բանակցությունների գործընթացը դուրս բերել փակուղուց,

---

[1] http://vn.kazimirov.ru/doc16.htm

[2] http://vn.kazimirov.ru/doc17.htm Փաստաթղթերի վերլուծությունը տես՝ **Փաշայան Հ., Բալայան Լ.,** «Փաթեթային և փուլային տարբերակներ. նրանց դերը Ղարաբաղյան հակամարտության կերպարի ընկալումներում», Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, Ստեփանակերտ 2018, 164-172 էջեր:

[3] http://vn.kazimirov.ru/doc18.htm Փաստաթղթի վերլուծությունը տես՝ **Փաշայան Հ., Բալայան Լ.,** «Ընդհանուր պետությունը» Ղարաբաղյան հակամարտության և հայերի ու կովկասյան թուրքերի համակեցության համատեքստում», Դեֆակտո պետությունները Հետխորհրդային տարածաշրջանում. Զարգացման ուղղությունները և հեռանկարները, Ստեփանակերտ 2018, 122-131 էջեր:

[4] (Г) Документы по совместной резолюции B2-538 и 587 88, Official Journal of Europian Communities, № C 94/11

3. ԵԱՀԿ Մինսկի խմբին կոչ է անում շարունակել ջանքերը հիմնախնդրի վերջնական լուծմանը հասնելու համար.
4. գտնում է, որ մարդու իրավունքների պահպանումը որպես հզոր բաղադրիչ, պետք է ԵԱՀԿ առաքելության հովանու ներքո իրականացվող ցանկացած դիտարկման մաս դառնա, որն անհրաժեշտ է ուղարկել Լեռնային Ղարաբաղ՝ երկարատև խաղաղության ապահովման և միջադեպերի վաղ նախազգուշացման համար, որոնք կարող են հանգեցնել մարտական գործողությունների վերսկսմանը,
5. գտնում է, որ Եվրոպական Միության կողմից տարածաշրջանին տրամադրվող օգնությունը պետք է կապված լինի երկու երկրներում մարդու իրավունքների պաշտպանության և ժողովրդավարության իրական առաջընթացի հասնելու հետ,
6. գտնում է, որ Եվրոպական Միությունը պետք է Հայաստանում և Ադրբեջանում մեծացնի Tacis-Democracy ծրագրով ոչ կառավարական կազմակերպություններին տրամադրվող օգնության ծավալները, որոնք հետաքրքրված են բանավեճերի խթանմամբ ու քաղաքական կրթությամբ հակամարտության կարգավորմանն առնչվող հարցերով,
7. հանձնարարում է իր Համանախագահին տվյալ հռչակագիրը ներկայացնել Խորհուրդին, Հանձնաժողովին, Եվրոպական Խորհուրդին, ԵԱՀԿ Խորհրդարանական Վեհաժողովին, ԵԱՀԿ Մինսկի խմբի Համանախագահներին, Հայաստանի և Ադրբեջանի խորհրդարաններին և Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչներին»:

Չնայած բանաձևում արձանագրված չափազանց կարևոր ձևակերպումներին, այդուհանդերձ, մատնանշվածն իրագործելու համար անհրաժեշտ են առնվազն երեք կողմի՝ Ադրբեջանի, Արցախի և Եվրոպական խորհրդարանի պատրաստակամությունն ու աջակցությունը: Եթե խոսենք Ադրբեջանի մասին, ապա ազատությունների սահմանափակման, մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ բազմաթիվ վկայություններ կան ոչ միայն արտասահմանյան մամուլում[1], այլև միջազգային հեղինակավոր կառույցների զեկույցներում[2]: Իշխանությունների նախա-

[1] A jailed blogger in Azerbaijan is on a hunger strike to fight bogus charges. He must be freed. https://www.washingtonpost.com/opinions/a-jailed-blogger-in-azerbaijan-is-on-a-hunger-strike-to-fight-bogus-charges-he-must-be-freed/2019/01/05/06e6d57a-104f-11e9-84fc-d58c33d6c8c7_story.html?noredirect=on&utm_term=.dcd616 b75430

[2] Азербайджан: содокладчики призывают власти пересмотреть дело Мехмана Гусейнова http://www.turan.az/ext/news/2019/1/free/politics%20news/ru/77809.htm, Представитель ОБСЕ по СМИ призвал освободить Мехмана Гусейнова http://www.contact.az/ext/news/2019/1/free/politics%20news/ru/77924.htm

ձեռնած սահմանադրական փոփոխություններն ապահովելով ալիևյան կլանի անընդհատ վերարտադրվելու հնարավորությունը[1], երկիրը զրկվել է իշխանափոխության՝ ժողովրդավարության կարևորագույն նախապայմաններից մեկից: Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանը, ապա Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը, բազմիցս է արտահայտել հիմնախնդիրը ռազմական ճանապարհով լուծելու մտադրությունը[2], որի վկայությունը դարձավ ոչ միայն 2016թ. ապրիլյան ագրեսիան, այլև դրա նախապատրաստմանն է ուղղված սպառազինության և ռազմական տեխնիկայի անընդհատ ավելացմամբ նույնիսկ ՀՀ մայրաքաղաքը գրավելու պատրաստակամության մասին հայտարարությունները[3]:

Իր ամբողջության մեջ կարևորելով նման աննախադեպ բանաձևի ընդունումը այսպիսի հեղինակավոր խորհրդարանի կողմից, միաժամանակ պետք է փաստել, որ տարբեր գործոնների արդյունքում հետագա տարիներին, ինչպես Եվրոպական խորհրդարանում, այնպես էլ միջազգային այլ կառույցներում Ղարաբաղյան հակամարտության կերպարի ընկալումները ամբողջությամբ փոխակերպվել են: Մանավորապես, եթե 1990-ականներին ընդունված բանաձևերում Եվրախորհրդարանը հիմնախնդիրն ընկալում էր Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի, պատմական արդարության վերականգնման շրջանակներում, և նույնիսկ երկրամասի անկախության հռչակումը դիտարկում էր որպես ԽՍՀՄ լուծարման շրջանակներում ընթացող անկախացման օրինաչափ գործընթաց, ապա 2000-ականներից սկսած նույն խնդրի վերաբերյալ կառույցի ընալումներն ու դրա հետևանք հանդիսացող դիրքորոշումները գլխիվայր փոխվում են, որում զգալի են պաշտոնական Բաքվի ակտիվ գործունեությունն ու հայկական կողմերի պասիվությունը: Այսպես, գաղտնիք չէ, որ դիվանագիտական ներկայացուցչությունների արդյունավետ գործունեությունից է կախված, թե ինչպիսի ընկալում կունենա տվյալ երկիրը ընդունող պետությունում[4], կամ միջազգային կազմակերպություններում ու հանրության շրջանակներում ընդհանրապես: Հաշվի առնելով, որ Հայաստանի արտաքին քաղաքականության տեղեկատվական գործունեության կարևորագույն խնդիրը ղարաբաղյան հիմնախնդ-

[1] http://www.azerbaijan.az/portal/General/Constitution/doc/constitution_r.pdf

[2] Речь Президента Азербайджана Ильхама Алиева. Президент Ильхам Алиев принял участие во всенародном веселье по случаю Новруз байрамы https://azertag.az/ru/xeber/President_Ilham_Aliev_prinyal_Uchastie_vo_vsenarodnom_vesele_po_sluchayu_Novruz_bairamy_OBNOVLENO_3_VIDEO-1146281

[3] Вернуть Ереван: историческая "империя" Ильхама Алиева https://www.pravda.ru/world/formerussr/armeniya/14-02-2018/1370368-elections-0/

[4] Торкунов А. В. (ред.), Дипломатическая служба, учебник МГИМО, 2002 г., стр. 408

րի և դրանից ածանցյալ հարցերի վերաբերյալ տեղեկության ներկայացումն է, երկրի ներսում և արտասահմանում համապատասխան հասարակական կարծիքի ապահովումը և օտարերկրյա լսարանի մոտ Հայաստանի դրական կերպարի արմատավորումը[1], ապա մեղմ ասած, այդ գործառույթն այնքան էլ արդյունավետ չի իրագործվել: Արդյունքում, հենց նույն եվրոպական կառույցների կողմից 1999-ից հետո ընդունվել են վերոնշված բանաձևերին ու հիմնախնդրի էությանը լիովին հակասող, Հայաստանն ագրեսորի կերպարով ներկայացվող զեկույցներ: Այդպիսիք են Պեր Գարթոնի[2], Դեյվիդ Աթկինսոնի[3], Ռոբերտ Ուոլթերի[4] զեկույցները[5]:

Սակայն վերջին տարիներին միջազգային կառույցներում Ղարաբաղյան հակամարտության կերպարի խեղաթյուրված ընկալումներին զուգահեռ, որոշակի դրական միտումներ են նկատվում: Այսպես, եթե 2010թ. մայիսի 20-ին Եվրախորհրդարանի կողմից ընդունված բանաձևում պահանջվում է հայկական ուժերը դուրս բերել «Ադրբեջանի բոլոր գրավյալ տարածքներից», իսկ Լեռնային Ղարաբաղի բնակչությունը ներկայացվում է որպես հայկական համայնք[6], ապա 2011թ. ապրիլին Եվրախորհր-

---

[1] **Բալայան Տ.,** Արտաքին քաղաքականության տեղեկատվական ապահովումը: Դասախոսությունների ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2018, էջ 38:

[2] European Parliament resolution with a European Parliament recommendation to the Council on EU policy towards the South Caucasus 2003/2225(INI)), P5_TA(2004)0122, http://www.europarl.europa.eu/sides/getDoc.do?pubRef=-//EP//NONSGML+TA+P5-TA-2004-0122+0+DOC+PDF+V0//EN:

[3] The conflict over the Nagorno-Karabakh region dealt with by the OSCE Minsk Conference, Resolution 1416 (2005), http://semantic-pace.net/tools/pdf.aspx? doc=aHR0cDovL2Fzc2VtYmx5LmNvZS5pbnQvbncveG1sL1hSZWYvWDJILURXLWV4dHIuYXNwP2ZpbGVpZD0xNzI4OSZsYW5nPUVO&xsl=aHR0cDovL3NlbWFudGljcGFjZS5uZXQvWHNsdC9QZGYvWFJlZi1XRC1BVC1YTUwyUERGLnhzbA==&xsltparams=ZmlsZWlkPTE3Mjg5:

[4] Escalation of violence in Nagorno-Karabakh and the other occupied territories of Azerbaijan, Doc. 13930, 11 December 2015, http://semantic-pace.net/tools/ pdf.aspx?doc=aHR0cDovL2Fzc2VtYmx5LmNvZS5pbnQvbncveG1sL1hSZWYvWDJILURXLWV4dHIuYXNwP2ZpbGVpZD0yMjI1NSZsYW5nPUVO&xsl=aHR0cDovL3NlbWFudGljcGFjZS5uZXQvWHNsdC9QZGYvWFJlZi1XRC1BVC1YTUwyUERGLnhzbA==&xsltparams=ZmlsZWlkPTIyMjU1: Փաստաթղթի վերլուծությունը տես՝ **Փաշայան Հ., Բալայան Լ.** Ռոբերտ Ուոլթերի հակահայկական զեկույցը. հայացք Արցախից www.noravank.am

[5] Եվրախորհրդարանի արտաքին հարցերի հանձնախմբից զեկուցող Պեր Գարթոնը Ղարաբաղյան հիմնախնդրի վերաբերյալ իր հայտարարություններում նույնիսկ Արցախում հայերենի գործածությունն է համարել միջազգային իրավունքի խախտում, որն ըստ նրա հետագայում կարող է խնդիրներ առաջացնել: Տես՝ Карабахский вопрос глазами Пера Гартона. https://ru.a1plus.am/2131.html

[6] European Parliament resolution of 20 May 2010 on the need for an EU strategy for the South Caucasus (2009/2216(INI)), P7_TA(2010)0193, http://www. Europarl.europa.eu/sides/getDoc.do?pubRef=-//EP//TEXT+TA+P7-TA-2010-0193+0+DOC+XML+V0//EN:

դարանի ընդունած բանաձևով եվրոպական կառույցներին կոչ է արվում պրագմատիկ նախձեռնությունների և նորարարական մոտեցումների շրջանակներում ակտիվացնել ոչ ֆորմալ շփումները անջատված տարածքների հասարակությունների հետ[1]: Եվրոպական խորհրդարանի և Արցախի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավորների փոխայցելությունները, որոնք զգալիորեն ակտիվացել են վերջին տարիներին[2], կարելի է տեղավորել նաև նշված բանաձևի համատեքստում: Արդեն 2017թ. ընդունած բանաձևում Եվրախորհրդարանը աջակցություն է հայտնում ԼՂ խնդրի լուծման ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերին՝ հիմք ընդունելով 2009թ. հայտարարված՝ տարածքային ամբողջականության, ազգերի ինքնորոշման իրավունքի և ուժի չկիրառման հիմնարար սկզբունքները[3]:

Կարծում ենք, հետագա դրական միտումները կարելի է խորացնել՝ մի կողմից հաշվի առնելով Հարավային Կովկասում Եվրամիության դերակատարության ընդլայնման[4], այդ թվում՝ հակամարտությունների կարգավորման ուղղությամբ ջանքերի ակտիվացման պատրաստակամությունը[5], Միության կողմից սեփական ռազմական կազմավորումներ ունենալու ցանկությունը[6], ինչի ստեղծման գործընթացի մեկնարկի մասին

[1] European Parliament resolution of 7 April 2011 on the review of the European Neighbourhood Policy - Eastern Dimension, P7_TA(2011)0153, http://www. europarl.europa.eu/sides/getDoc.do ?type=TA&reference=P7-TA-2011-0153&la nguage=EN

[2] Պետք է ասել, որ վերջին տարիներին բավականին ակտիվացել են Եվրոպական խորհրդարանի և ԱՀ Ազգային Ժողովի միջև կապերը: Մասնավորապես ոչ պաշտոնական շփումների մակարդակով տեղի են ունեցել բազմաթիվ փոխայցելություններ, ինչը նպաստում է երկուստեք փոխշահավետ առաջացած խնդիրների քննարկմանն ու դրանց լուծման ուղիների որոնմանը: 2015-2018 թթ. միջխորհրդարանական կապերի գործունեության համառոտագիրը տես՝ ԱՀ Ազգային ժողովի պաշտոնական կայքը՝ http://www.nankr.am/hy/2887

[3] European Parliament recommendation of 15 November 2017 to the Council, the Commission and the EEAS on theEastern Partnership, in the run-up to the November 2017 Summit (2017/2130(INI)), P8_TA(2017)0440 http://www. Euro parl.europa.eu/sides/getDoc.do?pubRef=-//EP//NONSGML+TA+P8-TA-2017 - 0440+0+DOC+PDF+V0//EN

[4] Communication from the Commission to the Council and the European Parliament on strengthening the European Neighbourhood Policy, COM (2006) 726 Final, 4 December 2006.

[5] European Council "A Secure Europe in a Better World - The European Security Strategy". Brussels, 12 December 2003, p. 3. http://www.consilium.Europa.eu/ue docs/cmsUpload/78367.pdf (Accessed April 27, 2013)

[6] Այդպիսի մտադրության մասին խոսակցությունները վերջերս ավելի հաճախակի են դարձել https://news.am/arm/news/480899.html

վերջերս հայտարարել է գերմանիայի պաշտպանության նախարարը[1], ավարական փոփոխությունները:

Մյուս կողմից՝ անհրաժեշտ է հաշվի առնել նաև հետևյալ իրողությունները, զարգացման միտումներն ու հնարավորությունները: Եվրոպական Միության՝ ի դեմս Եվրոպական խորհրդարանի Ղարաբաղյան հակամարտության նկատմամբ ցուցաբերած դիրքորոշումը նաև պատմական աղերսներ ունի, ինչը դրսևորվել է հատկապես 1990-ականներին՝ հիմնախնդրի վերսկսման, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կազմավորման գործընթացում: Ի տարբերություն օրինակ ԵԽԽՎ-ի, որտեղ հարցի քննարկումները սովորաբար Ադրբեջանի նախաձեռնության արդյունք են՝ նպատակ ունեն եվրոպական հասարակությանը ապակողմնորոշել և կարգավորման գործընթացը այլ հարթակներ տեղափոխել, Եվրոպական Խորհրդարանի ընդունած որոշումները բավականին հավասարակշռված, օբյեկտիվ և արժեքային բնույթ են կրել: Հետևաբար, Եվրոպական խորհրդարանի, որպես Եվրամիության հեղինակավոր կառույցներից մեկի՝ Ղարաբաղյան հակամարտության և Արցախի վերաբերյալ ընդունած փաստաթղթերի վերլուծությունը կարևոր նշանակություն ունեն անցյալը արժևորելու, ներկան հասկանալու և հուսալի ապագա կերտելու համար: Մանավանդ, որ խորհրդարանական համագործակցության ոլորտում Արցախի և Եվրոպական խորհրդարանի միջև երկկողմ և բազմակողմ ձևաչափերում վերջին տարիներին դրական տեղաշարժեր են արձանագրվել[2], ձևավորվել են բարեկամական խմբեր[3], Եվրոպական խորհրդարանում կազմակերպվել են արցախյան թեմայով քննարկումներ[4], իրականացվել փոխայցելություններ[5], Արցախի ժողովրդավարական կուսակցությունը դարձել է Եվրոպական ազատ դաշինք համաեվրոպական քաղաքական կուսակցության ընտանիքի անդամ[6]: Հատկանշական

---

[1] *«ԵՄ-ն սկսել է միասնական բանակի ստեղծումը». Գերմանիայի պաշտպանության նախարար* https://www.dailymail.co.uk/news/article-6579077/ Germanys-defence-minister-says-EU-building-united-army.html

[2] Եվրոպական խորհրդարանի պատգամավորների այցելությունների և փոխգործակցության մասին մանրամասն տես՝ Արցախի Հանրապետության Ազգային ժողովի կայքէջ http://www.nankr.am:

[3] Արցախի խորհրդարանը ընդլայնում է միջխորհրդարանական համագործակցությունը, http://www.nankr.am/hy/2568

[4] Ֆրանկ Էնգելը հյուրընկալվել է ԼՂՀ Ազգային ժողովում, http://www. nankr.am/hy/1640

[5] Արցախի Հանրապետության ԱԺ-ում հյուրընկալել են Եվրախորհրդարանի պատգամավոր Էլենի Թեոխարուսին և Կիպրոսի խորհրդարանի անդամներին, http://www. nankr.am/hy/2897

[6] Լեռնային Ղարաբաղը միանում է Եվրոպական միության քաղակական կառույցներին, https://hraparak.am/post/591fa7e3e3d84d0d37fd0cda

էր 2018թ. փետրվարի 28-ին Եվրախորհրդարանում կայացած Արցախյան շարժման 30-ամյակին նվիրված **«Լեռնային Ղարաբաղը և Եվրոպական Միությունը. 1988-2018. Լեռնային Ղարաբաղի հակամարտության շուրջ ԵՄ քաղաքականության երեսուն տարիների ամփոփումը»** խորագրով միջոցառումը, որի ընթացքում ելույթներով հանդես եկան ԵԽ պատգամավորներ ու փորձագետներ[1]:

Հետևաբար, Եվրախորհրդարանում և տարբեր միջազգային կառույցներում Ղարաբաղյան հակամարտության իրական կերպարը ներկայացնելու, Արցախի Հանրապետության հեղինակության բարձրացման, միջազգային հանրությանն անհրաժեշտ ազդակներ հաղորդելու, բարենպաստ քաղաքական մթնոլորտ ստեղծելու նպատակով անհրաժեշտ է պաշտոնական դիվանագիտության ակտիվացմանը զուգընթաց առավելագույնս օգտագործել խորհրդարանական[2] և ժողովրդական[3] դիվանագիտության հնարավորությունները մեր երկրի առջև ծառացած խնդիրները լուծելու նպատակով:

Այսպիսով, Եվրոպական խորհրդարանի կողմից ընդունված բանաձևերում Ղարաբաղյան հակամարտության կերպարի ընկալումները մեզ համար ընթացել են դրականից բացասական, իսկ վերջին տարիներին միտումներ կան հակառակ շարժընթացի համար: Նման փոոխակերպումներն առավելապես պայմանավորված են այն ազդակներով, որոնք հաղորդվել են միջազգային հանրությանը հակամարտող կողմերի համապատասխան քաղաքական, դիվանագիտական և տեղեկատվական գործունեության արդյունքում: 1980-1990-ականների բանաձևերում Եվրոպական խորհրդարանը հիմնախնդիրն ընկալել և այն ներկայացրել է իր էությանը համարժեք ձևակերպումներով, որպես ինքնորոշման իրավունքի համար մղվող արդարացի պայքար: Նույնիսկ 1999թ. մարտի 11-ին ընդունած բանաձևում արձանագրվել է, որ *1991թ. սեպտեմբերին ԼՂՀ հռչակման իրավական հիմքերը հավասարազոր են ԽՍՀՄ փլուզումից հետո նախկին խորհրդային սոցիալիստական հանրապետությունների համանման հռչակագրերին:* Հետագա տարիներին տարբեր գործոնների, մասնավորապես պաշտոնական Բաքվի գործունեության արդյունքում, հակամարտության կերպարը բացասական կերպափոխումների ենթարկ-

[1] http://www.agbu.am/am/archive/2017-12-21-07-25-48/2017-12-21-08-45-23/ 3302-nagorno-karabakh-the-eu-conference-european-parliament

[2] **Գրիգորյան Ա.,** Խորհրդարանական դիվանագիտության դերը Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացում, Կանթեղ. Գիտական հոդվածների ժողովածու, № 1, 130-142 էջեր:

[3] **Նավասարդյան Ա.,** Դասական դիվանագիտությունը՝ ժողովրդական դիվանագիտության և տեղեկատվական պատերազմների առաջատար գործոն, «21-րդ ԴԱՐ», **թիվ 6 (58)**, Եր., 2014թ., 5-10 էջեր:

վելով խեղաթյուրվել է, ինչի արդյունքում այն ներկայացվել է գլխավորապես աղրբեջանական ձևակերպումներին համահունչ՝ որպես տարածքային վեճ ՀՀ-ի և ԱՀ-ի միջև, դրանից բխող բացասական հետևանքներով:

Այդուհանդերձ, վերջին տարիներին տեղի ունեցած որոշակի տեղաշարժերը՝ Արցախի հետ փոխայցելությունները, խորհրդարանական և ժողովրդական դիվանագիտության ակտիվացման միտումները հաշվի առնելով, կարող ենք ասել, որ այդ հարաբերությունները խորացնելու չիրացված հսկայական ներուժ կա, որը խելամտորեն օգտագործելու դեպքում նոր հնարավորություններ կընձեռվեն միջազգային հանրության շրջանակներում հակամարտության կերպարի ընկալումների կերպափոխման և իր էությանը համարժեք լուծումների քաղաքական-դիվանագիտական հիմնավորումն ապահովելու համար:

Грайр Пашаян, Восприятие образа карабахской проблемы в резолюциях Европейского Парламента: тенденции и возможности преобразования - Статья посвящена восприятию и преобразованию образа Карабахского конфликта в резолюциях Европейского парламента, которые имели как положительные, так и отрицательные проявления.

В статье указывается, что, в частности, в формате парламентской и народной дипломатии есть нереализованный огромный потенциал для улучшения этих отношений, которая в случае разумного употребления даст новые возможности, как в Европарламенте, так и для широкого круга международного общества восприятий преобразования образа конфликта и для обеспечения политико-дипломатической обоснованности решений, соответствующих собственной сущности.

Hrayr Pashayan, Perception of the image of the Karabakh problem in the resolutions of the European parliament: Trends and opportunities of transformation - The article is devoted to the perception and transformation of the image of the Karabakh conflict in the resolutions of the European Parliament, which had both positive and negative manifestations.

The article points out that, in particular, in the format of parliamentary and public diplomacy there is an unrealized enormous potential to improve these relations, which, if used wisely, will provide new opportunities, both in the European Parliament and for a wide range of international society to ensure political and diplomatic substantiation of decisions consistent with its own essence.

ՀԱՎԵԼՎԱԾ

Երեքշաբթի, 11 մարտի 1999թ.

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ

B4-0234, 0275 and 0288/99 **ոչ պաշտոնական թարգմանություն**

ԿՈՎԿԱՍՈՒՄ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԲԱՆԱՁԵՎ

Եվրոպական խորհրդարանը.

- հաշվի առնելով Կովկասի վերաբերյալ իր նախորդ հռչակագրերը, մասնավորապես՝ 1987թ. հունիսի 18-ի, 1990թ. հունվարի 12-ի, 1993թ. հունվարի 21-ի, 1993թ. մայիսի 27-ի և 1998 թ. նոյեմբերի 3-ի հռչակագրերը,

հաշվի առնելով այն, որ

ա) 1991թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը իր անկախությունը հռչակել է հետևելով ԽՍՀՄ փլուզումից հետո նախկին խորհրդային սոցիալիստական հանրապետությունների համանման հռչակագրերին,

բ) պատերազմը լուրջ հումանիտար խնդիրների՝ մասնավորապես Հայաստանից, Լեռնային Ղարաբաղից և Ադրբեջանից ավելի քան մեկ միլիոն մարդու տեղափոխման պատճառ է դարձել,

գ) 1994 թվականից կրակի դադարեցման ռեժիմը հիմնականում պահպանվում է,

դ) Հայաստանը և Ադրբեջանը ցանկություն են հայտնել մտնել Եվրոպական խորհուրդ,

ե) Ժողովրդավարության ամրապնդումը և մարդու իրավունքների հարգումը նախապայման են հանդիսանում Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման համար,

զ) 1998թ. Ադրբեջանում կայացած նախագահական ընտրությունները աչքի են ընկել կեղծարարություններով և խախտումներով, որոնք քննադատվել են միջազգային դիտորդների կողմից, և որ նման խախտումներ նկատվել են նաև 1998թ. Մարտին Հայաստանում կայացած նախագահական ընտրությունների ընթացքում,

է) մինչև ներկա ժամանակներս Լեռնային Ղարաբաղի հակամարտության քաղաքական կարգավորման բանակցությունները դրական արդյունքների չեն բերել,

ը) միայն տարածաշրջանի բոլոր խնդիրները և վերջին ժամանակաշրջանի ընդհանուր քաղաքական զարգացումները հաշվի առնող մոտեցումը կարող է հանգեցնել երկարատև խաղաղության,

թ) Ռուսաստանը, ԱՄՆ և Ֆրանսիան ներկայացնող Մինսկի խմբի երեք համանախագահները, որոնց ԵԱՀԿ-ն հանձնարարել է մշակել ծրագիր երկարատև խաղաղության հասնելու համար, ներկայացրել են արդարացի հիմք՝ խնդրի խաղաղ կարգավորման բանակցությունների համար.

1. խրախուսում է Մինսկի խմբի առաջարկած խաղաղության ծրագիրը,

2. այն կարծիքին է, որ այդ առաջարկությունները քննարկման հիմք են, որը կարող է բանակցությունների գործընթացը դուրս բերել փակուղուց,

3. ԵԱՀԿ Մինսկի խմբին կոչ է անում շարունակել ջանքերը հիմնախնդրի վերջնական լուծման հասնելու համար.

4. գտնում է, որ մարդու իրավունքների պահպանումը որպես հզոր բաղադրիչ, պետք է ԵԱՀԿ առաքելության հովանու ներքո իրականացվող ցանկացած դիտարկման մաս դառնա, որն անհրաժեշտ է ուղարկել Լեռնային Ղարաբաղ՝ երկարատև խաղաղության ապահովման և միջադեպերի վաղ նախազգուշացման համար, որոնք կարող են հանգեցնել մարտական գործողությունների վերսկսմանը,

5. գտնում է, որ Եվրոպական Միության կողմից տարածաշրջանին տրամադրվող օգնությունը պետք է կապված լինի երկու երկրներում մարդու իրավունքների պաշտպանության և ժողովրդավարության իրական առաջընթացի հասնելու հետ,

6. գտնում է, որ Եվրոպական Միությունը պետք է Հայաստանում և Ադրբեջանում մեծացնի Tacis-Democracy ծրագրով ոչ կառավարական կազմակերպություններին տրամադրվող օգնության ծավալները, որոնք հետաքրքրված են բանավեճերի խթանմամբ ու քաղաքական կրթությամբ հակամարտության կարգավորմանն առնչվող հարցերով,

7. հանձնարարում է իր Համանախագահին տվյալ հռչակագիրը ներկայացնել Խորհուրդին, Հանձնաժողովին, Եվրոպական Խորհուրդին, ԵԱՀԿ Խորհրդարանական Վեհաժողովին, ԵԱՀԿ Մինսկի խմբի Համանախագահներին, Հայաստանի և Ադրբեջանի խորհրդարաններին և Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչներին:

Official Journal of the European Communities, C 175, 21.6.1999 p. 251.